ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.06.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/41

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ

Բողոք բերող՝ «Պրոֆտեստ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«Պրոֆտեստ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Թ. Տարախչյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԶՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, հեմոդիալիզի համար անհրաժեշտ ջրի մաքրման համակարգի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Պրոֆտեստ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 01.06.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել թիվ «ՀՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. Դադարեցնել՝ 25.05.2021թ.-ի գնահատող հանձնաժողովի թիվ 4 արձանագրությամբ, «Աքվա Ստանդարտ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու վերաբերյալ որոշումները:

2. Մերժել «Աքվա Ստանդարտ» ՍՊԸ-ի հայտը, քանի որ «Աքվա Ստանդարտ» ՍՊԸ-ն մասամբ է շտկել, իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում համապատասխան չի ներկայացրել որակի վկայականները:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 31.05.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի 01.06.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/8694-2021 գրությամբ բողոքը վերադարձվել է՝ բողոքում առկա թերությունները վերացնելու համար:

Ընկերությունը 01.06.2021թ.-ին ներկայացրել է բողոքի շտկված տարբերակը, որը նույն օրը մակագրվել է Բողոքներ քննող անձին:

01.06.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/41 համարի ծածկագիրը:

09.06.2021թ.-ին և 25.06.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 09.06.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 25.06.2021թ.-ին:

2. «Պրոֆտեստ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Պրոֆտեստ» ՍՊԸ-ն 01.06.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Բողոքի առարկա է հանդիսանում «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից հայտարարված ՀՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/21 ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի կայացված որոշումները:

Հայտերը գնահատման ժամանակ խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1 կետը: Աքվա Ստանդարտ ՍՊԸ ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին մասնավորապես՝ չի ներկայացվել համապատասխան որակի վկայականներ:

Հանձնաժողովը երկրորդ անգամ, հաշվի չի առել վերը նշված պահանջները և հայտը համարել է բավարար խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2 կետը:»:

Վերոգրյալի հիման վրա՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել թիվ «ԶՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. Դադարեցնել՝ 25.05.2021թ.-ի գնահատող հանձնաժողովի թիվ 4 արձանագրությամբ, «Աքվա Ստանդարտ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու վերաբերյալ որոշումները:

2. Մերժել «Աքվա Ստանդարտ» ՍՊԸ-ի հայտը, քանի որ «Աքվա Ստանդարտ» ՍՊԸ-ն մասամբ է շտկել, իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում համապատասխան չի ներկայացրել որակի վկայականները:

3. <u>«Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 02.06.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/8825-2021 գրությամբ դիմել է «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Պրոֆտեստ» ՍՊԸ-ի կողմից 01.06.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն, ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին՝ չներկայացնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված բողոքի քննության համար անհրաժեշտ փաստաթղթերը:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2021/41 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից հեմոդիալիզի համար անհրաժեշտ ջրի մաքրման համակարգի ձեռքբերման

նպատակով 16.03.2021թ.-ին հայտարարվել է «ԶՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է ապրանքի հետևյալ տեխնիկական բնութագիրը.

«1. Ջրի մաքրման կայան (ԶՄԿ).

Միացված սարքերի քանակը՝ ոչ պակաս քան 10 (միաժամանակ աշխատող սարքեր՝ ընդլայնման հնարավորությամբ): Նվազագույն արտադրողականություն՝ ոչ պակաս քան 600 լ/ժամ՝ մուտքային ջրի 10oC-ի ջերմաստիճանի դեպքում: Ռեվերս օսմոսի (ՌՕ) կառավարման միկրոպրոցեսորային համակարգի առկայություն: Մաքրված ջրի հաղորդունակությունը համաձայն ԳOUS Ռ 52556 կամ AAMI: Ջերմաստիճանի ցուցադրման (դիսպլեյի) առկայություն: Հաղորդունակության չափիչի, ճնշման չափիչի և հոսքի ինդիկատորի առկայություն: Համակարգը պետք է լինի ամբողջությամբ ավտոմատացված:

2. Սարքավորումների նվազագույն լրակազմ.

Մեխանիկական ճնշման ռեդուկտոր, Մեխանիկական զտիչ, Մուտքային ջրի պահպանման բակ ոչ պակաս քան 1000լ, Պոմպակայան, Նստվածքային ֆիլտրման և մետաղների հեռացման ավտոմատ զտիչ: Փափկեցման ավտոմատ ֆիլտր, Դեքլորացման ածխածնային ավտոմատ ֆիլտր, Ջրի զտման (աղահեռացում) ՌՕ համակարգ, Մաքուր (ելքային) ջրի պահպանման բակ ոչ պակաս քան 1000լ, Պոմպակայան ՈՒՄ լամպի առկայությամբ: Լրակազմը պետք է ներառի ջրատարի (водяная петля) մանրէազերծման համար նախատեսված սարք կամ համակարգ մանրէազրծման համար հանատեսված բազային ռեակտիվներով: Ջրամատակարարման ներքին համակարգ՝ օգտագործելով PEX կամ PVC-U խողովակներ (ԶՄԿ արտադրողի կողմից գրավոր հաստատում): Դիալիզի մեքենային ջրի միացման կետերում չժանգոտվող պողպատից կամ համարժեք նյութից պատրաստված միացումների առկայություն: Փոստ ՌՕ ջրի քիմիական, աղտոտվածության, էնդոթոքսինների և մանրէաբանական թեստերը պետք է համապատասխանեն AAMI կամ ԵՏՄ ստանդարտներին: Խողովակաշարը նեռարյալ բոլոր միացումները և ջրահեռացման համակարգը պետք է պաշտոնապես (գրավոր) համաձայնեցվեն ՌՕ-ի կամ ԶՄԿ-ի արտադրողի հետ: Խողովակաշարի ախտահանման հնարավորության առկայություն: Ախտահանում՝ ջերմային կամ քիմիական:

3. Սնուցում.

Սնուցում՝ 220-240Վ/50Հց կամ 380-400Վ/50Հց (Երեք ֆազ)

4. Պարագաներ.

Համալիրը ներառում է լիարժեք գործունեության համար անհրաժեշտ բոլոր լրացուցիչ սարքերը և պարագաները (Օրինակ՝ ջրի պոմպ, լրացուցիչ ջրի պոմպ, ջրի բակեր, խողովակներ, մոնոմետրեր, ռոտատոմետր, ճնշման տվիչ և այլն):

5. Ստանդարտներ (փաստաթղթային վկայագրեր (վկայագրերի պատճեներ))՝ ISO 9001 կամ ԻՍՕ 9001, CE Mark (Directive 93/42/EEC) կամ ТР ТС 020»:

iii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Պրոֆտեստ» ՍՊԸ-ն և «Աքվա Ստանդարտ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Մասնակից):

iv. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, որպես ապրանքի տեխնիկական բնութագիր նշել է հետևյալը.

«Հակադարձ օսմոսային համակարգ, ՌՕ - 1000լ/ժ արտադրողականությամբ, որը իր մեջ ներառում է մեխանիկական զտիչ, ավազային զտիչ, պոմպակայան, ելքային ջրի բակ, 1000լ ածխային ֆիլտր, պոմպակայան ՈՒՄ լամպի առկայությամբ, մեխանիկական ճնշման ռեդուկտոր, խողովակաշարերի ախտահանման առկայության հնարավորություն, ջրամատակարարման խողովակաշար, PVC Ջրատարի (водяная петля), մանրէազերծման համար նախատեսված սարք կամ համակարգ մանրէազրծման համար հանատեսված բազային ռեակտիվներով տարողությամբ, մուտքային ջրի բակ 1000լ տարողությամբ, փափկեցուցիչ, ֆիլտր դեքլորացման համար նախատեսված դիալիզի մեքենային ջրի միացման կետերում չժանգոտվող պողպատից կամ համարժեք նյութից պատրաստված միացումների առկայություն, փոստ ՌՕ ջրի քիմիական, աղտոտվածության, էնդոթոքսինների և մանրէաբանական թեստերը պետք է համապատասխանեն AAMI կամ ԵՏՄ ստանդարտներին: Խողովակաշարը նեռարյալ բոլոր միացումները և ջրահեռացման համակարգը պետք է պաշտոնապես (գրավոր) համաձայնեցվեն ՌՕ-ի կամ ՁՄԿ-ի արտադրողի հետ:»:

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 23.03.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ «Աքվա Ստանդարտ» ՍՊԸ-ի և «Տեխսթոր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային հայտերը համապատասխանել են հրավերով սահմանված պահանջներին:

vi. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով, որոշել է

էլեկտրոնային եղանակով ծանուցել մասնակիցներին՝ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների օրվա, ժամի և վայրի մասին, որը տեղի կունենա 08.04.2021թ.-ին ժամը 14:00-ին:

vii. Հանձնաժողովի 08.04.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ մասնակիցների կողմից նոր գնային առաջարկներ չեն ներկայացվել, ինչի արդյունքում որոշում է կայացվել գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Աքվա Ստանդարտ» ՍՊԸ-ին:

viii. www.gnumner.am համացանցային կայքում 09.04.2021թ.-ին հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն՝ սահմանելով 5 օրացուցային օր անգործության ժամկետ:

ix. «Պրոֆտեստ» ՍՊԸ-ի կողմից 14.04.2021թ.-ին գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/31 ծածկագրով բողոքը 14.05.2021թ.-ին կայացված որոշմամբ բավարարվել է և թիվ «ՋՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին պարտավորեցվել է՝

- դադարեցնել 08.04.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված «Աքվա Ստանդարտ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները:
- ընդունել «Աքվա Ստանդարտ» ՍՊԸ-ի հայտում առկա անհամապատասխանությունները շտկելու մասին որոշում:

x. Հանձնաժողովի 21.05.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կայացրած որոշումը, որոշել է դադարեցնել «ՋՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2021 թվականի ապրիլի 8-ի նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետով ընդունված «Աքվա Ստանդարտ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները:

xi. Նույն արձանագրության համաձայն՝ «Աքվա Ստանդարտ» ՍՊԸ-ի հայտի հավելված 1.1-ում արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- Հայտով պահանջվում է «Ջրի մաքրման կայան նվազագույն արտադրողականություն՝ ոչ պակաս քան 600 լ/ժամ մուտքային ջրի 10°Շ-ի ջերմաստիճանի դեպքում», ներկայացվել է «Հակադարձ օսմոսային համակարգ, 1ԴՕ - 1000լ/ժ», նշված չէ, թե որ ջերմաստիճանի դեպքում:

- Հայտով պահանջվում է «Նստվածքային ֆիլտրման և մետաղների հեռացման, փափկեցման, դեքլորացման ածխածնային ավտոմատ ֆիլտրեր», ներկայացվել է «փափկեցման, դեքլորացման ածխածնային ֆիլտրեր»:
- Հայտով պահանջվում է «Ջրամատակարարման ներքին համակարգ՝ օգտագործելով PEX կամ PVC-U խողովակներ (ՋՄ4 արտադրողի կողմից գրավոր հաստատում), ներկայացվել է «Ջրամատակարարման խողովակաշար PVC»:
- Առկա չէ կամ պատշաճ չի ներկայացված խողովակաշարը ներառյալ բոլոր միացումները և ջրահեռացման համակարգը պետք է պաշտոնապես (գրավոր) համաձայնեցվեն ՌՕ-ի կամ ՋՄԿ-ի արտադրողի հետ:
- Բացակայում են Հայտով պահանջվող.

- Ջրի զտման (աղահեռացում) ՌՕ համակարգը,
- Ջրատարի (водяная петля) մանրէազերծման համար նախատսված սարքն կամ համակարգ մանրէազրծման համար՝ համալրված բազային ռեակտիվներով,
- Ռեվերս օսմոսի (ՌՕ) կառավարման միկրոպրոցեսորային համակարգի առկայություն.
- Մաքրված ջրի հաղորդունակությունը համաձայն ԳOUS 0- 52556 կամ AAMI,
- Ջերմաստիճանի ցուցադրման (դիսպ|եյի) առկայություն,
- Հաղորդունակության չավփչի, ճնշման յա փիլի և հոսքի ինդիկատորի առկայություն,
- Համակարգը ամբողջությամբ ավտոմատացված լինելը:
- Որակի վկայականները:

xii. Հանձնաժողովը որոշել է էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել «Աքվա Ստանդարտ» ՍՊԸ-ին հայտում առկա անհամապատասխանությունների մասին՝ առաջարկելով մեկ աշխատանցային օրվա ընթացքում շտկել դրանք:

xiii. Նույն արձանագրությամբ հանձնաժողովը արձանագրել է, որ 24.05.2021թ.-ին «Աքվա Ստանդարտ» ՍՊԸ-ն էլեկտրոնային փոստով ուղարկել է հայտի ճշտված հավելված 1.1-ը, ինչպես նան որակի վկայականների պատճեները:

Ելնելով վերոգրյալներից՝ Հանձնաժողովը որոշել է «ՋՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/21» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնուսկից ճանաչել «Աքվուս Ստանդարտ» ՍՊԸ-ին՝ ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին

նախապատվություն տալու սկզբունքով: Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Պրոֆտեստ» ՍՊԸ-ի կողմից 01.06.2021թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան

ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (30.07.2020թ.-ի թիվ 1275-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ ապրանքների գնման դեպքում մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից հեմոդիալիզի համար անհրաժեշտ ջրի մաքրման համակարգի ձեռքբերման նպատակով 16.03.2021թ.-ին հայտարարված «ՁՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ

բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ Կարգի 41-րդ կետն ուղղակիորեն սահմանում է և այդ կետի իմաստից բխում է, որ հայտում ներառվող փաստաթղթերում արձանագրված՝ շտկման ենթակա անհամապատասխանություններն ենթակա են շտկման՝ հանձնաժողովի քարտուղարի կողմից Մասնակցին էլեկտրոնային եղանակով ուղարկված ծանուցման ստացման պահից հաշված մեկ աշխատանքային օրյա ժամկետում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերի դրույթները իմպերատիվ (պարտադիր) կերպով սահմանում են հանձնաժողովի քարտուղարի գործողությունները, որոնք պետք է իրականացվեն մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների դեպքում, այն է՝ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, ինչպես նաև մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Օրենքի 34-րդ հոդվածի և Կարգի 41-րդ կետի դրույթների իմաստից բխում է, որ մասնակցի ներկայացրած հայտը գնահատվում է բավարար այն դեպքում, երբ այն համապատասխանում է հրավերով նախատեսված պայմաններին:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից հեմոդիալիզի համար անհրաժեշտ ջրի մաքրման համակարգի ձեռքբերման նպատակով 16.03.2021թ.-ին հայտարարված «ԶՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է ապրանքի հետևյալ տեխնիկական բնութագիրը.

«1. Ջրի մաքրման կայան (ՁՄԿ).

Միացված սարքերի քանակը՝ ոչ պակաս քան 10 (միաժամանակ աշխատող սարքեր՝ ընդլայնման հնարավորությամբ): Նվազագույն արտադրողականություն՝ ոչ պակաս քան 600 լ/ժամ՝ մուտքային ջրի 10oC-ի ջերմաստիճանի դեպքում: Ռեվերս օսմոսի (ՌՕ) կառավարման միկրոպրոցեսորային համակարգի առկայություն: Մաքրված ջրի հաղորդունակությունը համաձայն ԳOUS Ռ 52556 կամ AAMI: Ջերմաստիճանի ցուցադրման (դիսպլեյի) առկայություն: Հաղորդունակության չափիչի, ճնշման չափիչի և հոսքի ինդիկատորի առկայություն: Համակարգը պետք է լինի ամբողջությամբ ավտոմատացված:

2. Սարքավորումների նվազագույն լրակազմ.

Մեխանիկական ճնշման ռեդուկտոր, Մեխանիկական զտիչ, Մուտքային ջրի պահպանման բակ ոչ պակաս քան 1000լ, Պոմպակայան, Նստվածքային ֆիլտրման և մետաղների հեռացման ավտոմատ զտիչ: Փափկեցման ավտոմատ ֆիլտր, Դեքլորացման ածխածնային ավտոմատ ֆիլտր, Ջրի զտման (աղահեռացում) ՌՕ համակարգ, Մաքուր (ելքային) ջրի պահպանման բակ ոչ պակաս քան 1000լ, Պոմպակայան ՈՒՄ լամպի առկայությամբ: Լրակազմը պետք է ներառի ջրատարի (водяная петля) մանրէազերծման համար նախատեսված սարք կամ համակարգ մանրէազրծման համար հանատեսված բազային ռեակտիվներով: Ջրամատակարարման ներքին համակարգ՝ օգտագործելով PEX կամ PVC-U խողովակներ (ՁՄԿ արտադրողի կողմից գրավոր հաստատում): Դիալիզի մեքենային ջրի միացման կետերում չժանգոտվող պողպատից կամ համարժեք նյութից պատրաստված միացումների առկայություն: Փոստ ՌՕ ջրի քիմիական, աղտոտվածության, էնդոթոքսինների և մանրէաբանական թեստերը պետք է համապատասխանեն AAMI կամ ԵՏՄ ստանդարտներին: Խողովակաշարը նեռարյալ բոլոր միացումները և ջրահեռացման

համակարգը պետք է պաշտոնապես (գրավոր) համաձայնեցվեն ՌՕ-ի կամ ՁՄԿ-ի արտադրողի հետ: Խողովակաշարի ախտահանման հնարավորության առկայություն: Ախտահանում՝ ջերմային կամ քիմիական:

3. Սնուցում.

Սնուցում՝ 220-240Վ/50Հց կամ 380-400Վ/50Հց (Երեք ֆազ)

4. Պարագաներ.

Համալիրը ներառում է լիարժեք գործունեության համար անհրաժեշտ բոլոր լրացուցիչ սարքերը և պարագաները (Օրինակ՝ ջրի պոմպ, լրացուցիչ ջրի պոմպ, ջրի բակեր, խողովակներ, մոնոմետրեր, ռոտատոմետր, ճնշման տվիչ և այլն):

5. Ստանդարտներ (փաստաթղթային վկայագրեր (վկայագրերի պատճեներ))՝ ISO 9001 կամ ԻՍՕ 9001, CE Mark (Directive 93/42/EEC) կամ TP TC 020»:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Աքվա Ստանդարտ» ՍՊԸ-ն հայտի թիվ 1.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, որպես ապրանքի տեխնիկական բնութագիր նշել է հետևյալը.

«Հակադարձ օսմոսային համակարգ, ՌՕ - 1000լ/ժ արտադրողականությամբ, որը իր մեջ ներառում է մեխանիկական զտիչ, ավազային զտիչ, պոմպակայան, ելքային ջրի բակ, 1000լ ածխային ֆիլտր, պոմպակայան ՈՒՄ լամպի առկայությամբ, մեխանիկական ճնշման ռեդուկտոր, խողովակաշարերի ախտահանման առկայության հնարավորություն, ջրամատակարարման խողովակաշար, PVC Ջրատարի (водяная петля), մանրէազերծման համար նախատեսված սարք կամ համակարգ մանրէազրծման համար հանատեսված բազային ռեակտիվներով տարողությամբ, մուտքային ջրի բակ 1000լ տարողությամբ, փափկեցուցիչ, ֆիլտր դեքլորացման համար նախատեսված դիալիզի մեքենային ջրի միացման կետերում չժանգոտվող պողպատից կամ համարժեք նյութից պատրաստված միացումների առկայություն, փոստ ՌՕ ջրի քիմիական, աղտոտվածության, էնդոթոքսինների և մանրէաբանական թեստերը պետք է համապատասխանեն AAMI կամ ԵՏՄ ստանդարտներին: Խողովակաշարը նեռարյալ բոլոր միացումները և ջրահեռացման համակարգը պետք է պաշտոնապես (գրավոր) համաձայնեցվեն ՌՕ-ի կամ ՁՄԿ-ի արտադրողի հետ:»:

«Պրոֆտեստ» ՍՊԸ-ի կողմից 14.04.2021թ.-ին գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/31 ծածկագրով բողոքը 14.05.2021թ.-ին կայացված որոշմամբ բավարարվել է և թիվ «ՁՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին պարտավորեցվել է՝

- դադարեցնել 08.04.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված «Աքվա Ստանդարտ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները:

- ընդունել «Աքվա Ստանդարտ» ՍՊԸ-ի հայտում առկա անհամապատասխանությունները շտկելու մասին որոշում:

Հանձնաժողովի 21.05.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կայացրած որոշումը, որոշել է դադարեցնել «ՋՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2021 թվականի ապրիլի 8-ի նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետով ընդունված «Աքվա Ստանդարտ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները:

Նույն արձանագրության համաձայն՝ «Աքվա Ստանդարտ» ՍՊԸ-ի հայտի հավելված 1.1-ում արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- Հայտով պահանջվում է «Ջրի մաքրման կայան նվազագույն արտադրողականություն՝ ոչ պակաս քան 600 լ/ժամ մուտքային ջրի 10°Շ-ի ջերմաստիճանի դեպքում», ներկայացվել է «Հակադարձ օսմոսային համակարգ, 1ԴՕ - 1000լ/ժ», նշված չէ, թե որ ջերմաստիճանի դեպքում:

- Հայտով պահանջվում է «Նստվածքային ֆիլտրման և մետաղների հեռացման, փափկեցման, դեքլորացման ածխածնային ավտոմատ ֆիլտրեր», ներկայացվել է «փափկեցման, դեքլորացման ածխածնային ֆիլտրեր»:

- Հայտով պահանջվում է «Ջրամատակարարման ներքին համակարգ՝ օգտագործելով PEX կամ PVC-U խողովակներ (ՋՄ4 արտադրողի կողմից գրավոր հաստատում), ներկայացվել է «Ջրամատակարարման խողովակաշար PVC»:

- Առկա չէ կամ պատշաճ չի ներկայացված խողովակաշարը ներառյալ բոլոր միացումները և ջրահեռացման համակարգը պետք է պաշտոնապես (գրավոր) համաձայնեցվեն ՌՕ-ի կամ ՋՄԿ-ի արտադրողի հետ:

- Բացակայում են Հայտով պահանջվող.

- Ջրի զտման (աղահեռացում) ՌՕ համակարգը,

- Ջրատարի (водяная петля) մանրէազերծման համար նախատեսված սարքն կամ համակարգ մանրէազրծման համար՝ համալրված բազային ռեակտիվներով,

- Ռեվերս օսմոսի (ՌՕ) կառավարման միկրոպրոցեսորային համակարգի առկայություն.

- Մաքրված ջրի հաղորդունակությունը համաձայն ԳOUS 0- 52556 կամ AAMI,
- Ջերմաստիճանի ցուցադրման (դիսպ|եյի) առկայություն,
- Հաղորդունակության չավփչի, ճնշման յա փիլի և հոսքի ինդիկատորի առկայություն,
- Համակարգը ամբողջությամբ ավտոմատացված լինելը:
- Որակի վկայականները:

Հանձնաժողովը որոշել է էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել «Աքվա Ստանդարտ» ՍՊԸ-ին հայտում առկա անհամապատասխանությունների մասին՝ առաջարկելով մեկ աշխատանցային օրվա ընթացքում շտկել դրանք:

Նույն արձանագրությամբ հանձնաժողովը արձանագրել է, որ 24.05.2021թ.-ին «Աքվա Ստանդարտ» ՍՊԸ-ն էլեկտրոնային փոստով ուղարկել է հայտի ճշտված հավելված 1.1-ը, ինչպես նան որակի վկայականների պատճենները:

Ելնելով վերոգրյալներից՝ Հանձնաժողովը որոշել է «ՋՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/21» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնուսկից ճանաչել «Աքվաս Ստանդարտ» ՍՊԸ-ին՝ ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Վերոգրյալ իրավանորմի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, ուսումնասիրելով Բողոքաբերի կողմից ներկայացված «Աքվա Ստանդարտ» ՍՊԸ-ի՝ որպես շտկում ներկայացված հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրն ու բողոքին կից ներկայացված փաստաթղթերը, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Աքվա Ստանդարտ» ՍՊԸ-ի կողմից որպես շտկում ներկայացված հավելված 1.1-ով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը համապատասխանում է «ՋՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/21» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված ապրանքի տեխնիկական պահանջներին, որպիսի պայմաններում Հանձնաժողովը, «Աքվա Ստանդարտ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու և ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշում կայացնելով, գործել է իրավաչափ՝ պահպանելով Օրենքի 34-րդ հոդվածով, Կարգի 41-րդ կետով և Հրավերի 8.9-րդ կետով սահմանված պահանջները, որպիսի պայմաններում գնահատող հանձնաժողովի 25.05.2021թ.-ի թիվ 4 արձանագրությամբ, «Աքվա Ստանդարտ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու վերաբերյալ

որոշումները դադարեցնելու և «Աքվա Ստանդարտ» ՍՊԸ-ի հայտը մերժելու հիմքեր առկա չեն, ուստի Ընկերության կողմից ներկայացված բողոքն ենթակա է մերժման:

Հարկ է նկատել նաև, որ Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերի դրույթների վրա հասնելու (կիրառելու) հանգամանքը գործադիրը պայմանավորել է հրավերի պահանջների նկատմամբ մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների հանգամանքով:

Ինչպես Օրենքի իմաստից է բխում, որ գնման գործընթացի շրջանակներում ներկայացված հայտերի գնահատումը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «ՋՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/21» ծածկագրով գշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, կայացնելով «Աքվա Ստանդարտ» ՍՊԸ-ի հայտը հրավերով նախատեսված պայմաններին բավարար գնահատելու և ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշում, թույլ չի տվել Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերի խախտումներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Պրոֆտեստ» ՍՊԸ-ի կողմից 01.06.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/41 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**